

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ

ԿԱՐԳԱԴԻՐՈՒԹՅՈՒՆԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ  
ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱՊԱՆԻ  
ԳՈՒՅՔԻ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԱՆԲԱՎԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՈՎ ԱՎԱՐՏՄԱՆ ՈՐՈՇՈՒՄ  
ԿԱՅԱՅՐԱԾ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից պարտապանի գույքի բացակայության կամ անբավարարության պատճառով ավարտման որոշում կայացրած կատարողական վարույթների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության դատական ակտերի գլխավոր հարկադիր կատարողին՝ յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող տասնօրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության Նախագահի վերահսկողական ծառայություն ներկայացնել տեղեկատվություն՝ տվյալ եռամսյակում Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից պարտապանի գույքի բացակայության կամ անբավարարության պատճառով ավարտման որոշում կայացրած կատարողական վարույթների վերաբերյալ:

2. Հայաստանի Հանրապետության Նախագահի վերահսկողական ծառայության ղեկավարին՝ սույն կարգադրության 1-ին կետում նշված տեղեկատվությունն ստանալուց հետո ամփոփել այն՝ անհրաժեշտության դեպքում պահանջելով լրացուցիչ նյութեր եւ տեղում կատարելով ուսումնասիրություններ, որից հետո զեկուցել Հայաստանի Հանրապետության Նախագահին:

15 դեկտեմբերի 2007 թվականի

ՆԿ-199-Ա

